ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան	26.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/56

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Թագ Հէմ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Թագ Հէմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, քիմիական, լաբորատոր նյութերի և լաբորատոր պարագաների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-20-9/31-2»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3199-2021 գրությամբ «Թագ Հէմ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.03.2021թ.-ի թիվ Պն/Պն/02/1002-2021 գրության հիման վրա, 04.03.2021թ.-ին «Թագ Հէմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 04.03.2021թ.-ին:

05.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/56 համարի ծածկագիրը:

12.03.2021թ.-ին, 19.03.2021թ.-ին և 26.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 19.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.03.2021թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 01.03.2021թ.-ի թիվ Պն/Պն/02/1002-2021 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և ստորև ներկայացված կազմակերպությունների միջև կնքված գնման պայմանագրերի 2.1.7.1 կետերի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ ամփոփելով լուծարման արդյունքում առաջացող փույժերի և փուգանքների վերաբերյալ տվյալները, 30.12.2020թ. դրությամբ,

1. միակողմանի մասնակի լուծել է՝ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի հետ 09.09.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/31-2 ծածկագրով գնման պայմանագիրը:

2. միակողմանի մասնակի լուծել է՝ «Մեդիպլաս» ՍՊԸ-ի հետ 09.09.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/35-8 ծածկագրով գնման պայմանագիրը:

3. միակողմանի մասնակի լուծել է՝ «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հետ 18.11.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/41-3 ծածկագրով գնման պայմանագիրը:

4. միակողմանի ամբողջությամբ լուծել է՝ «Մեդիսար» ՍՊԸ-ի հետ 19.11.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/42-1 գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրերի լուծման վերաբերյալ գրությունը 26.02.2021թ. միաժամանակ ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում:

Կից ներկայացվում են վերը նշված մասնակիցների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «Թագ Հէմ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Թագ Հէմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 05.03.2021թ.-ին գրությամբ դիմել է «Թագ Հէմ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3199-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստերին 19.03.2021թ.-ին նաև ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

«2020թ. սեպտեմբերի 9-ին «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) միջև կնքվել է

ապրանքների ձեռքբերման «ԳՀԱՊՁԲ-20-9/31-2» ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել՝ ֆինանսավորել 2020թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ. ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավել:

Պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Պայմանագրի 5.2-րդ կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի 5.3-րդ կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Պայմանագրի 5.4-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահման¬ված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանա¬գրությունը:

Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավո-րությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին ուղղված 25.02.2021թ. գրությամբ (կցվում է) ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ նշված պայմանագիրը միակողմանի լուծել է 30.12.2020թ.՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի <<բ>> ենթակետի և 6.2 կետերի պահանջները:

Այնուհետև, ՀՀ պաշտպանության նախարարությունը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, 2020թ. սեպտեմբերի 9-ին «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կնքվել է ապրանքների ձեռքբերման «ԳՀԱՊՁԲ-20-9/31-2» ծածկագրով պայմանագիր:

Վերը նշված պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 30.12.2020թ. միակողմանի լուծվել է՝ հիմք ընդունելով սույն Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի <<բ>> ենթակետի և 6.2 կետերի պահանջները:

Գտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի միջև ապրանքների ձեռքբերման նպատակով կնքված գնման պայմանագիրը ՀՀ ՊՆ-ի կողմից միակողմանի լուծվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ՝ հետևյալ հիմնավորմամբ.

1. Նախ, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է՝ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է պայմանագրով նախատեսված ողջ ապրանքները, բացի դիագնոստիկում պրովաչեկի ապրանքատեսակի, որի վերաբերյալ ՍՊԸ-ն հայտնել է, որ արտադրող միակ ընկերության կողմից տվյալ ապրանքի արտադրությունը դադարեցվել է անորոշ ժամկետով և բանակցություններ են տարվում գտնել աշխարհում այլ արտադրող ընկերություն, որը հնարավորություն կտա մինչև պայմանագրի վերջնաժամկետի ավարտը մատակարարել նաև այդ ապրանքատեսակը /այդպես էլ անհնար է եղել գտնել այդ ապրանքը/:

Ի ապացույց վերը նշվածի՝ ՍՊԸ-ի կողմից ս.թ. մարտի 15-ին հարցում է կատարվել ողջ աշխարհում դիագնոստիկում պրովաչեկի ապրանքատեսակի արտադրող ООО «ЭПИДБИОМЕД-ДИАГНОСТИКА» ընկերությանը /կցվում է/, որի կողմից՝ արտադրող միակ ընկերության կողմից 16.03.2021թ. տրվել է պատասխան /կցվում է/, որ տվյալ ապրանքի

արտադրությունը դադարեցվել է կորոնավիրուսի հետևանքով առաջացած կոլապսի պատճառով, մինչդեռ մինչ 2020թ. 29.07.2020թ. տվյալ ապրանքը՝ դիագնոստիկում պրովաչեկը, առկա է եղել ընկերության պահեստում: Նույն գրությամբ ՕՕՕ «ЭПИДБИОМЕД-ДИАГНОСТИКА» ընկերությունը հաստատել է, որ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից դեռևս 02.09.2020թ. արված պատվերի դիմաց բոլոր վճարումները կատարված են եղել (վճարման փաստաթղթերը կցվում են):

Այսինքն՝ այն ժամանակ, երբ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն հայտ էր ներկայացրել վերը նշված գնման ընթացակարգին, այնուհետև կնքել պայմանագիր, որով պետք էր մի շարք այլ ապրանքներից զատ, մատակարարեր նաև դիագնոստիկում պրովաչեկը՝ ՕՕՕ «ЭПИДБИОМЕД-ДИАГНОСТИКА» ընկերության կողմից այն արտադրվել է, առկա է եղել պահեստում, իսկ հետագայում «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կամքից անկախ պայմաններում այդ ապրանքատեսակի արտադրությունը դադարցեվել է:

2. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ Կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես արդեն նշվել է, թիվ ՍՑ-ԼՕ-2021/56 ընթացակարգ նախաձեռնելու հիմքը առաջացել է 30.12.2020թ. (տես 25.02.2021թ. ՍՊԸ-ին և 01.03.2021թ. ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությունները, կցվում են)՝ հիմքում դնելով Պատվիրատուի կողմից՝ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի հետ կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-9/31-2» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին որոշումը:

Այսինքն՝ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 30.12.2020թ.–ին, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը միայն 01.03.2021թ. հիմքում դնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից՝ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի հետ կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-9/31-2» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին որոշումը:

Այնինչ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել դեռևս 30.12.2020թ.–ին և միայն 3 ամիս անց Պատվիրատուն որոշում է կայացրել Ընկերության տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգեր /ՍՅ-ԼՕ-2019/233, ՍՅ-ՆԳ-2019/195 և այլն: Օրինակ՝ թիվ ՍՅ-ԼՕ-2019/233 ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը /ներկայացվում է համառոտ/.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.11.2019թ.–ին թիվ ՊՆ/02/2630-2019 գրությամբ: Սույն գործի փաստերի համաձայն,

Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 18.11.2019թ.–ին՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի 12.11.2019թ.–ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 26.11.2019թ.–ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից ...:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.–ի թիվ 26/26-1/19878-2019 գրությամբ «Պոժմաստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակարգը մերժել:»

Ամփոփելով վերը նշված բոլոր փաստական հանգամանքերը՝ կարող ենք փաստել, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սույն գործի շրջանակներում թույլ են տրվել բազմաթիվ խախտումները:»:

Ի լրումն 19.03.2021թ.-ի ներկայացված դիրքորոշման, 24.03.2021թ.-ի ներկայացրել է գրություն, որով հայտնել է հետևյալը.

««ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ նկատառումները.

Ինչպես արդեն հայտնել ենք՝ 2020թ. սեպտեմբերի 9-ին «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կնքվել է ապրանքների ձեռքբերման «ԳՀԱՊՁԲ-20-9/31-2» ծածկագրով պայմանագիր:

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին ուղղված 25.02.2021թ. գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ նշված պայմանագիրը միակողմանի լուծել է 30.12.2020թ.՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի <<բ>> ենթակետի և 6.2 կետերի պահանջները:

Այնուհետև, ՀՀ պաշտպանության նախարարությունը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն էինք դարձրել այն կարևորագույն հանգամանքի վրա, որ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է պայմանագրով նախատեսված ողջ ապրանքները, բացի դիագնոստիկում պրովաչեկի ապրանքատեսակի, որի վերաբերյալ ՍՊԸ-ն հայտնել է, որ արտադրող միակ ընկերության կողմից տվյալ ապրանքի արտադրությունը դադարեցվել է անորոշ ժամկետով և բանակցություններ են տարվում գտնել աշխարհում այլ արտադրող ընկերություն, որը հնարավորություն կտա մինչև պայմանագրի վերջնաժամկետի ավարտը մատակարարել նաև այդ ապրանքատեսակը, որը այդպես էլ անհնար է եղել գտնել այդ ողջ ընթացքում և որպես ապացույց վերը նշվածի՝ ՍՊԸ-ի կողմից ս.թ. մարտի 15-ին հարցում էր կատարվել ООО «ЭПИДБИОМЕД-ДИАГНОСТИКА» ընկերությանը, որի կողմից 16.03.2021թ. տրվել էր պատասխան, որ տվյալ ապրանքի արտադրությունը դադարեցվել է կորոնավիրուսի հետևանքով առաջացած կոլապսի պատճառով, մինչդեռ մինչ 2020թ. 29.07.2020թ. տվյալ ապրանքը՝ դիագնոստիկում պրովաչեկը, առկա է եղել ընկերության պահեստում: Նույն գրությամբ ООО «ЭПИДБИОМЕД-ДИАГНОСТИКА» ընկերությունը հաստատել է, որ «ԹԱԳ

ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից դեռևս 02.09.2020թ. արված պատվերի դիմաց բոլոր վճարումները կատարված են եղել (գրությունները և վճարման փաստաթղթերը կցվել էին):

Ստացվել էր մի իրավիճակ, որ այն ժամանակ, երբ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն հայտ էր ներկայացրել վերը նշված գնման ընթացակարգին, այնուհետև կնքել պայմանագիր, որով պետք էր մի շարք այլ ապրանքներից զատ մատակարարեր նաև դիագնոստիկում պրովաչեկը՝ ООО «ЭПИДБИОМЕД-ДИАГНОСТИКА» ընկերության մոտ այն առկա է եղել, իսկ հետագայում «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կամքից անկախ պայմաններում այդ ապրանքատեսակի արտադրությունը դադարցեվել է:

19.03.2021թ. ժամը 16:00-ին ընթացակարգի քննության նպատակով հրավիրված նիստի ժամանակ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից պարտավորեցվեց ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն, մասնավորապես, թե ինչու է ООО «ЭПИДБИОМЕД-ДИАГНОСТИКА» ընկերության կողմից մեկ այլ ՍՊԸ-ի վերաբերյալ ներկայացվել տեղեկատվություն, ինչպես նաև ներկայացնել լրացուցիչ փաստեր, որտեղ հստակ կարտացոլվի պայմանագրի լուծմամբ մատնանշված ապրանքի նպատակով կատարված պատվերի և վճարման վերաբերյալ հիմնավորումներ:

Ի կատարումն վերը նշվածի գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնում ենք հետևյալը.

1. Բողոքներ քննող անձին նիստի ընթացքում ներկայացված 02.09.2020թ. թիվ 3785 վճարման հանձնարարագրի (ռուս. լեզվով) 21 տողից (Артикул M12) պարզ է դառնում, որ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին հանձնարարվել է վճարել դիագնոստիկում պրովաչեկի համար, իսկ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի բանկային փոխանցման փաստաթղթից պարզ է դառնում, որ այդ գումարը վճարվել է:

2. ООО «Эпидбиомед-диагностика» ООО և АО «НПО» Микроген միջև առկա կապի կապակցությամբ հայտնում ենք, որ ООО «Эпидбиомед-диагностика» ի պատասխան «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի հարցմանը հայտնել է հետևյալը. «В ответ на Ваше письмо № 16 от 23.03.2021 сообщает, что наша компания является дистрибьютором компании АО «НПО» Микроген» на территории РФ и только ООО «Эпидбиомед-диагностика» имеет право продавать продукты произведенные от АО «НПО» Микроген» (գրությունը կցվում է):»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Թագ ՀԷմ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված

պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2021/56 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Թագ ՀԷմ» ՍՊԸ-ի միջև 09.09.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-9/31-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի 2020թ.-ի 3-րդ եռամսյակում:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 26.02.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 25.02.2021թ.-ի թիվ ՆՏԱ/676 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Թագ ՀԷմ» ՍՊԸ-ի միջև 09.09.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-9/31-2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2020թ.-ի 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել նեքոհիշյալ ցանկի ապրանքատեսակը նշված քանակներով՝

Ապրանքի անվանում	Չ/մ	Քանակ	Մատակարարման ժամանակացույց՝ 2020թ. 3-րդ եռամսյակ	Չմատակարարված քանակ
Դիագնոստիկում պրովաչեկի	լրակազմ	1	1	1

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակի մասով ապրանքի չմատակարարաման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը

և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

v. «Թագ Հէմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ООО «Эпидбиомед-диагностика» ընկերության կողմից 16.03.2021թ.-ի գրությունը, որով վերջինս նշել է, որ «Թագ Հէմ» ՍՊԸ-ի կողմից հետագայում գնվելիք ապրանքների վերաբերյալ հարցումը կատարվել է 29.07.2020թ.-ին, և այդ օրվա դրությամբ ապրանքն առկա է եղել արտադրողի պահեստում: «Թագ Հէմ» ՍՊԸ-ի կողմից ապրանքների գնման մասին հաստատումը ստացվել է 02.09.2020թ.-ին, և այդ ժամանակահատվածում՝ 29.07.2020-02.09.2020թթ.-ի ընթացքում, պահեստում առկա ապրանքը վաճառված է եղել, և ООО «Эпидбиомед-диагностика» ընկեության կողմից կատարվել է հարցում արտադրողին՝ առաքման ժամկետների վերաբերյալ, ինչին պատասխան է ստացվել, որ պանդեմիայի հետ կապված դադարեցվել է վերոնշյալ ապրանքի արտադրությունը և նոր ապրանքի չափաբաժինը կրկին կարտադրվի 2020թ.-ի դեկտեմբեր ամսին: 28.12.2020թ.-ին ապրանքը ստացվել է և 30.12.2020թ.-ին հանձնվել առաքումը կատարող ընկերությանը, որպեսզի առաքվի «Թագ Հէմ» ՍՊԸ-ի կողմից նշված հասցեով, սակայն ամանորյա տոների հետ կապված առաքումը հետաձգվել է 2021թ.-ի առաջին աշխատանքային օրը:

vi. «Թագ Հէմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նաև ООО «Эпидбиомед-диагностика» ընկերության կողմից 23.03.2021թ.-ի գրությունը, որով վերջինս տեղեկացրել է, որ ООО «Эпидбиомед-диагностика» ընկերությունը հանդիսանում է АО «НПО» Микроген» ընկերության միակ դիստրիբյուտորը Ռուսաստանի Դաշնության ողջ տարածքում և միայն ООО «Эпидбиомед-диагностика» ընկերությունը կարող է վաճառել ООО «Эпидбиомед-диагностика» ընկերության արտադրանքը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3199-2021 գրությամբ «Թագ Հէմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել

մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի**, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների **հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձն ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ*

«Լանդրաս» ՓԲԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

Պայմանագրի 7-րդ գլխով սահմանվել է, որ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Թագ Հէմ» ՍՊԸ-ի միջև 09.09.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-9/31-2»

ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի 2020թ.-ի 3-րդ եռամսյակում:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Թագ Հէմ» ՍՊԸ-ի միջև 09.09.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-9/31-2» ծածկագրով գնման պայմանագրի համաձայն Մասնակիցը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2020թ.-ի 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել «Դիագնոստիկում պրովաչեկի» ապրանքը: Հաշվի առնելով ապրանքի չմատակարարաման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 26.02.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին 25.02.2021թ.-ի թիվ ՆՏԱ/676 ծանուցումը:

«Թագ Հէմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ООО «Эпидбиомед-диагностика» ընկերության կողմից 16.03.2021թ.-ի գրությունը, որով վերջինս նշել է, որ «Թագ Հէմ» ՍՊԸ-ի կողմից հետագայում գնվելիք ապրանքների վերաբերյալ հարցումը կատարվել է 29.07.2020թ.-ին, և այդ օրվա դրությամբ ապրանքը առկա է եղել արտադրողի պահեստում: «Թագ Հէմ» ՍՊԸ-ի կողմից հաստատումը ապրանքների գնման մասին ստացվել է 02.09.2020թ.-ին, և այդ ժամանակահատվածում՝ 29.07.2020-02.09.2020թթ.-ի ընթացքում, պահեստում առկա ապրանքը վաճառված է եղել, և ООО «Эпидбиомед-диагностика» ընկեության կողմից կատարվել է հարցում արտադրողին՝ առաքման ժամկետների վերաբերյալ, ինչին պատասխան է ստացվել, որ պանդեմիայի հետ կապված դադարեցվել է վերոնշյալ ապրանքի արտադրությունը և նոր ապրանքի չափաբաժինը կրկին կարտադրվի 2020թ.-ի դեկտեմբեր ամսին: 28.12.2020թ.-ին ապրանքը ստացվել է և 30.12.2020թ.-ին հանձնվել առաքումը կատարող ընկերությանը, որպեսզի առաքվի «Թագ Հէմ» ՍՊԸ-ի կողմից նշված հասցեով, սակայն ամանորյա տոների հետ կապված առաքումը հետաձգվել է 2021թ.-ի առաջին աշխատանքային օրը: Մասնակցի կողմից ներկայացվել է նաև ООО «Эпидбиомед-диагностика» ընկերության կողմից 23.03.2021թ.-ի գրությունը, որով վերջինս տեղեկացրել է, որ ООО «Эпидбиомед-диагностика» ընկերությունը հանդիսանում է АО «НПО» Микроген» ընկերության միակ դիստրիբյուտորը Ռուսաստանի Դաշնության ողջ տարածքում և միայն ООО «Эпидбиомед-диагностика» ընկերությունը կարող է վաճառել ООО «Эпидбиомед-диагностика» ընկերության արտադրանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին և դրան կցված արտերկրում գործող արտադրող կազմակերպությունների կողմից տրված տեղեկատվություններին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից ապրանքների չմատակարարելու հանգամանքը պայմանավորված է եղել արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է:

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ

մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորությունն անպատշաճ կատարելը չի կարող հանգեցնել պատասխա-նատվության, քանի որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը: Մասնակիցը օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված (ՀՀ-ում ախտահանիչ միջոցների ախտահանաբանական փորձաքննությունն իրականացնելու

համար հավատարմագրված լաբորատոր կենտրոնի բացակայությամբ պայմանավորված), հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3199-2021 գրությամբ «Թագ Հէմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/56 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**